

երկրաւոր երջանկութեան անսահման ձգտումը ոտքի կանգնեցնող լծակ» և սակայն այն հազարաւոր անձինք, որ նորա հեռանդներն են, միայն հաց չեն ցանկանում. նոքա գիտեն ընդհակառակն, որ միայն հացով չեն ապրում մարդիկ. նոքա պատասխան են որոնում աշխարհի և կեանքի դրած բոլոր հարցերի և պատրաստ են գորա՝ իրենց այդ հասարակական գոհեր բերել. Էենց այդ պատճառով եկեղեցու գործն այսօր աւելի հեշտ է, քան նախկին շրջաններին որ և է մեկում լինել կարող էր. Երբէք չի եղել այնպիսի մի ժամանակ երբ այնքան շատ մարդիկ մի հաստատուն ինքնուրոյն համոզում ձեռք բերելու ձգտէին, ինչպէս այսօր. Զնայած որ ամէն ինչ բաժան բաժան և առերեւոյթ կազմաւորուած էր իր ժամանակէն, կայ այնուամենայնիւ մի զօրութիւն, որ ամենուրեք ներս է թափանցում. կապում է, ամուր հոգևոր միութիւն է յառաջ բերում. մի տքն է դա և խօսքը, և խօսքի զօրեղ պէտք է յաղթէ. Մի համոզման համար, որ ինկապէս համոզմունք է, մի հաւատի համար, որ իրօք հաւատալ կարելի է՝ ներկայ սերունդը պատրաստ է կեանքը գրաւ դնել. Մարդն այնպէս ստոր բնութիւն չունի, որ հանգիստ գտնէ սեփական ետի հաւանքին ծառայելով, նա որոնում է մի համոզումն կեանքի գաղափարի մասին. Սակայն հաւատը պէտք է իրօք հաւատալի լինի. Այս է եկեղեցու առաջ գրած խնդիրը, թէ հետմն և թէ այժմ, նա պէտք է ներկայ սերունդին կենդանի Աստուծոյ և յաւիտենական կեանքի մասին քարոզէ. մեր Տիրոջ և Փրկչի մասին վկայէ, որի պատկերը ամենահեռաւորներին իսկ յարգանք և սէր կարող է դնու աղէ, նա պէտք է ամենայն լրջութեամբ քարոզէ, որ մեզքը մարդկանց կորուստն է և ամէն տեսակ թշուառութեանց ամենազօրեղ արմատը, և այդ պէտք է անէ նա ամենայն ազատութեամբ, հասկանալի ձևով և արտայայտութեան հասկանալի միջոցներով. Բաւական է, որ նա այս անէ, գորաւով արդէն իւր համաձայն ան կան գործի մեծ մասն արած կլինի. — Այնուհետև այս գաղափարն իրագործելու համար նա մի քանի միջոցներ է ցոյց տալիս և ամբողջով իւր խօսքն ասում է. «Երբէք մեծ խնդիրներ կան մեր և երկր սերունդների առաջ, աւետարանել, մեր եղբայրակիցներին, օգնել բոլոր կարողութեան չափով իրենց կարօտութեան մէջ և պաշտպանել մեր գիտութիւնը, մեր քաղաքակրթութիւնը, մեր քաղաքակրթութիւնը, մեր Լպակրկին անգամ շնչտելով վերջինս, թէ ինչպէս անհրաժեշտ է ներկայում եկեղեցւոյ վարդապետութեան և գիտութեան մէջ կատարել հաշտութիւն կայացնել, նա կիրում է իւր խօսքը եկեղեցական երգի մի հատուածով:

Նետուած են բուն, երկարատև ծախհարութիւններ և մի քանի անյաջող ընդդիմախօսութեան փորձեր, որոնք քիչ էր մնում ամբողջ համաժողովի թողած վսեմ տպաւորութիւնը խանգարէին. Մի ծերունի հոգևորական Առաքելական հանգանակի հարցը յիշելով պահանջում է, որ Հառնակ նախ իւր արածը ապահարէ, Ահագին աղմուկ է բարձրանում, այնպէս որ նախագահը ստիպուած էր նորա խօսքը ընդհատել. Ապա տեղից վեր է կենում խորապէս յուզուած Ըտեօկէրը, որ դաւանարանական հարցերի մէջ Հառնակի եռանդուն հակաակորդն է, և իւր հեղինակաւոր խօսքով ոչ միայն յաջողում է կրքերը խաղաղացնել, այլ և յառաջ

է բերում մի այնպիսի մարու որդևորութիւն, որի շնորհիւ համաժողովը ինչպէս սկսուած էր այնպէս էլ գեղեցիկ խոր տպաւորիչ կերպով վերջանում է, Արժէք այդ ընդդիման այն բնութիւն վերայ, ուր կանգնած էին՝ Վաղներ, Ըտեօկէր, Հորրէ, Հառնակ, Վաֆտան, Հերմանն, Ռադէ, Նաուաման, Գեօհրէ, Բրաուն և Ն. բուն գերմանական առաքիւնութեան և մտաւոր ու բարոյական ոյժի անձնաւորեալ օրինակներ, Այդ մարդիկ, որոնցից իւրաքանչիւրը հասարակական կեանքի ամբողջ մի շինուած կրում է իւր բազմաշխատ ուսերի վերայ, ամբողջ առաջնորդութեան գործում ամէն հաշիւներ մտացած և այսպէս ձեռք ձեռքի տուած կանգնած՝ ցոյց էին տալիս կենդանի օրինակով, թէ ինչով է զօրեղ Կերմանիան. ոչ իւր մեքենաներով, արուեստով, ճախութեամբ՝ այլ այսպիսի տղամարդներով. Ի՞նչ այդ տղամարդոց մօտ պակաս չեն նաև նման կանայք, նոքա դաստիարակող մայրերը, այդ ապացուցել է այս տարուայ համաժողովը. բայց այդ մասին միւս անգամ:

Կ. Վ.



ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՔՐՈՒՍԻԿՈՒՆ

ՀԱՌՎՄԷՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻ

Կերմանիոյ մէջ այս վերջին ամիսներում մեծ աղմուկ է հանել Մելլագէի (Mellage) դատը, որ մայիս 30-ին (18) գանգատարներին դատապարտութեամբ վերջացաւ. — Ա.ախէնի մօտ, մի գաւառում, որի բլրնակէաց գլխաւոր մեծամասնութիւնը կաթողիկէներ են, զբնուում է Ալէքսեան կարգի Մարիաբերդ վանքը՝ ապաստարան 660 խելագարներին. Արդէն վաղուց գերմանացիք գանգատուում էին հիւանդանոցներում և մանաւանդ հոգևորական կարգերի հսկողութեան ներքոյ երկր հաստատութեանց մէջ տիրող անհմուտ և անիրաւացի վարման դէմ դէպի մտաւոր հիւանդները. Յանկարծ յայտնուում է Մելլագէ անունով մէկի զբուռածքը, որ Ալէքսեան եղբայրներին մեղադրում է, թէ անգլիացի Փօրէս հոգևորականին նիւթական շահերի համար, շնայելով նորա մտաւորապէս կատարեալ առողջութեան, 39 ամիս փակած պահել են գժանոցում, թէ նոքա ամենակոպիտ կերպով են վարուում հիւանդների հետ, անտանելի տանջանքներ տալիս նոցա, մինչ ի մահ գանկոծում և Ն. Գատաստանական երկարատև քննութիւնը հաստատել է, որ Մելլագէի ցուցումները ճշմարիտ են և որ Ալէքսեանների վանքում մեծամեծ անիրաւութիւններ են գործուել, երբեմն մինչև իսկ միամտարար՝ տգէտ աշխարհական եղբայրների ձեռքով. Եւ որովհետև այս դատին գրեթէ բոլոր մասնակցողները կաթողիկէներ են և ուլտարամնտան (անպրկառնական մղեւանաց պապական) կաթողիկ մամուլը ամենայն կռուողով

պաշտպանում էր սղէքսեաններին, ուստի դատաստանի հետեանքները մեծ արատ են ձգում կաթողիկէ եկեղեցու վերայ, Բողոքականները չեն փախցնում ի հարկէ առիթը, այս հանգամանքների վերայ ուշադրութիւն դարձնելու, իսկ բժիշկներն ու քաղաքագետական հիւանդանոցների կազմակերպութիւնը պաշտպանողները պահանջում են նորանոր միջոցներ ձեռք առնել, մտաւոր հիւանդների խնամատարութիւնը աւելի բարձր վիճակի մէջ դնելու համար:

Վերջին ժամանակի ուշադրաւ գլխաւոր դէպքերից մէկն է՝ Շէօնրուրգ—Վալդենրուրգ իշխան Ֆրիդրիխի բողոքականութիւնից կաթողիկոսութեան դառնալը, նորա հայրը՝ Կրնստ իշխանը, որ Տեպլիցում է նստում և մեծ կալուածներ ունի շրջակայքում, ջերմեռանդ բողոքական է և շատ է վշտացած իւր երիտասարդ որդու, առանց իւր գիտութեան և հակառակ իւր կամքի՝ դաւանափոխ լինելուն վերայ, Բողոքական եկեղեցու համար այս դէպքը վըշտացուցիչ է գլխաւորապէս այլ պատճառով, որ Ֆրիդրիխ իշխանը իւր հօր գլխաւոր ժառանգը լինելով, նորա մահից յետոյ պէտք է լինի մի շարք բողոքական համայնքների, իսկ այդ իրաւունքը բողոքական եկեղեցիների համար մեծ նշանակութիւն ունի, Իշխանին մեղադրում են, որ նա առանց օրէնքի տրամադրութիւնները պահպանելու, կաթողիկէ կղերի ազդեցութեան ներքոյ դաւանափոխութեան է դիմել, նա ինքը բնակուում է Վարսոնիայում, իսկ սաքսոնական իրաւանց համաձայն նա պէտք էր հանդիսաւոր կերպով կաթողիկոսութիւն ընդունելուց չորս շաբաթ առաջ իւր միտքը յայտնէր ծխատէր պատտրին և երբ վերջինի յորդորները այդ ժամանակամիջոցում զուր անցնէին, այնուհետև միայն կատարէր իւր մտադրութիւնը, Երեւի նա Աւստրիոյ կալուածատէր լինելով կամեցել է այստեղի օրէնքների ներքոյ ծածկուիլ, բայց այդտեղ էլ մեղադրութիւններ են զըտնում՝ նորա դէմ:

Կոմս Պաուլ ֆոն Հէօնսրէօֆս, որ Յիսուսեան կարգի անդամ լինելով երկու տարի առաջ զուրս եկաւ, բողոքականութիւն ընդունեց և սկսեց իւր տեղեկութիւնները հրապարակ հանել, մտայլ գոյներով նկարագրել այդ կարգի գործունէութիւնը՝ այժմ մի ընդարձակ յօդուածով պաշտպանում է իրեն Յիսուսեանների նոր երկրի մի ակնարկութեանց դէմ՝ իրր թէ «մարմնական և հոգեկան ահարութեան համար թողել է նա այդ կարգը», Ինչպէս առաջ, ասում է նա, այնպէս էլ այժմ ևս պընդում եմ թէ չկայ մի կուսակցութիւն, որ այնպէս

ցած, անխիղճ և կեղծաւոր եղանակով իրեն մի աւախորժ անձի ամեն կերպ վնասել ջանար, ինչպէս «Ճշմարտութեան, ազատութեան և արդարութեան» համար կուռող յարգանքները կուսակցութիւնը, նորա նպատակները սրբում են միջոցներ, Իմ Յիսուսեան կարգից դուրս գալու և աւետարանական եկեղեցի մտնելուս պատճառները կրօնական և հայրենասիրական համոզման անձեռնմխելի սահմաններում պէտք է որոնել, երկարատև ծանր կուռով և մեծ զոհարելութեամբ և մ ձեռք բերել ևս այդ համոզումը՝ յաղթելով Յիսուսեան կարգի հակակրօնական և հակահայրենասիրական գաղափարներին»:

ՌՈՒՍՈՅ ԵԿԵՂԵՅԻ

Յերկ. վեստիկի շաբաթաթերթի № 28-ում տպուած է մի ուշադրութեան արժանի յօդուած, յիշոցարանութեան, հայհոյասիրութեան չար ատրը արմատախիլ անելու անհրաժեշտութեան մասին, Հանդիսի յօդուածագիրը ամենայն իրաւունքով հայհոյանքը համարում է անբարոյականութեան մի աղբիւր, մանաւանդ մանուկների նկատմամբ, որոնք միանգամայն ապականուում են մեծերի հայհոյասիրութեան շնորհիւ, Յօդուածագիրը ուսմանը նա համարում է աշխարհիս ամենահայհոյասէր ժողովուրդը և անհրաժեշտ է դատում, որ թէ հոգևոր և թէ մարմնաւոր իշխանութիւնը ամենայնուրջ ուշադրութիւն դարձնեն այդ վատ սովորութեան վրայ և ամէն ջանք գործ դնեն, որքան կարելի է շուտ, առաջն առնելու այդ ատիւ, որ գնալով աւելի ու աւելի վարակում է ուսւ ժողովրդին:

Այդ գործումն էլ ամենամեծ դերն ընծայուում է դպրոցին և բարոյական բովանդակութիւն ունեցող խրատական գրքերին:

Նոյն թերթը մատնացոյց է անում Ախարանդիի մի յօդուածի վերայ, «Ռուսական եկեղեցին Արևմտեան սահմաններում» վերնագրով, Հեղինակն այդ տեղ գանդատուում է այն արհամարհանքի դէմ, որին հանդիպում է այդ երկրներում ուսաց լեզուն, գերակշռող դերը լեհերէնին տալով, Նոյն իսկ ուսւ կրթուած գասակարգը, եթէ ոչ լեհերէն, գոնէ Ֆրանսերէն է խօսում, «որպէս զի լեհացիներին չվիրաւորէ», Այն ընտանիքներում ուր խառն ամուսնութիւններ տեղի ունին, մեծ ազդեցութիւն է գործում կաթողիկէ կղերը, մանաւանդ երբ մայրն է կաթողիկ. թէ և օրէնքի համաձայն բոլոր դաւանները օրթողոքս եկեղեցու ձէտով են մըկրտուում, բայց նորա մեծանում են անտեղեակ ուսաց եկեղեցու դաւանութեան և կարգերին, ան»

տեղեակ ուսաց լեզուին: Հեղինակի կարծիքով այս ամէնի առաջն առնելու համար պէտք է հոգ տանել ժողովրդական կրթութեան մասին, ուս գիւղացիներ փոխադրել այդ կողմերը: Ալիւայում հոգևոր ձեմարան բանալ, որպէս զի կրթուած և կաթիլիկներ չես մրցելու ընդունակ հոգևորակա նութիւն պատրաստուի: «Յերկ. վեստնիկը» իւր կողմից աւելացնում է, որ այդպիսի մի ձեմարան հաստատելու փորձ եղել է արդէն, բայց նիւթական միջոցների պակասութեան պատճառով անկատար է մնացել: ուստի և առաջարկում է աւելի գործնական միջոցներ՝ արդէն եղած հոգևոր ձեմարաններում մարդիկ պատրաստել, ոստիկանական վարչութիւնը զօրացնել և էն:

Նորին Մեծութիւն Թագաւոր Այսորը հաճեցաւ յունիս 30-ին Պետերհոֆի պալատում ընդունել Հաբսբուրգ թագաւոր Մենելիքի ուղարկած արտակարգ դեսպանութիւնը: որի ներկայացուցիչն էր իշխան Գամբո և նորան ուղեկից ի թիւս այլոց Խարրարի թեմի կառավարիչ Նեզդիպէր եպիսկոպոսը: Ինչպէս յայտնի է Հաբէշները Կ-րդ դարում քրիստոնէութիւնը ընդունելով, Ե-րդ դարում բաժանուեցան Միարանակաց վէճերի պատճառով: Աերջին դարերում նորա մօտիկ յարաբերութիւն էին պահպանում Հայոց Երուսաղեմի Պատրիարքութեան հետ: այժմ սկսել են Ռուսաց հետ բարեկամանալ:

Յուլիս 5-ին նոյն պալատում ներկայացաւ Թագաւոր Այսոր Բուլղարական մի պատգամաւորութիւն, որի առաջնորդն էր Տըբնօվոյի Աղեմնտ մետրապոլիտը: Այս պատգամաւորութեան քաղաքական նշանակութիւն են տայիս և սկիզբն են համարում Ռուսաստանի ու Բուլղարիայի լարուած յարաբերութեան մեղմանալուն:

Աերջին 2ին-ձապոնական պատերազմից յետոյ ձապոնիայում գործող զանազան եկեղեցեաց առաքելութիւնները սկսեցին կրկնապատիկ եռանդով աշխատել, այդ արդէն կէս-Եւրոպականացած և մեծ ապագայ խոստացող երկրի մէջ քրիստոնեաների թիւը շատացնելու: այս կամ այն եկեղեցու ազդեցութիւնը զօրացնելու: Արդէն պատերազմի ժամանակ քրիստոնեաներին ազատ մուտք էր տրուած հիւանդանոցներում և մեծ քանակութեամբ ս. Գիրք էր բաժանուում զօրքի մէջ: Թէ այս յաջողութեանց և թէ այն հանգամանքի շնորհիւ, որ շին-ձապոնական պատերազմը քաղաքակրթութեան ծաւալման համար մեծ նշանակութիւն ունեցող մի դէպք էր, որ խորին Ասիայի դռները պէտք է եւրո-

պական ուսման և արուեստի առաջ բանար: շատերին յոյս էր ներշնչում: Թէ ժամանակը եկել է ձապոնական ժողովուրդը քրիստոնեայ դարձնելով քաղաքակրթութեան հետ մէկ տեղ քրիստոնէութիւն և սփռել միլիոնաւոր բուզդայականների և մահմետականների մէջ: Ռուսաց եկեղեցին վաղուց արդէն եռանդով և համեմատաբար մեծ յաջողութեամբ գործում է ձապոնացիների մէջ: Արեւելեան եկեղեցու ձեւերն ու արարողութիւնները աւելի դրաւիչ են մի ասիական ժողովրդի համար, քան բողոքականների քարոզները: Որպէս զի ժամապաշտութիւնը աւելի մատչելի լինի ձապոնացի զանազան դասակարգերին: Ռուսաց եկեղեցույ առաքելութեան պարագլուխ և անխոնջ աշխատող Նիկոլայ եպիսկոպոսը ձեռնարկել է նորից թարգմանելու ժամագիրքը ձապոնեկէն լեզուով՝ ուսուրէնից, յունարէնի համեմատութեամբ:

Այս ամառը Պետերբուրգի հոգևոր ձեմարանի ուսանողները մի ձանապարհորդութիւն են կատարել դէպի Նովոքոբոզ յատկապէս հնագիտական նըպատակով: Աւսանողները պրօֆ. Պոկրովսկու առաջնորդութեամբ ուսումնասիրել են գլխաւորապէս Նովոքոբոզի եկեղեցական հնութիւնները: Պրօֆ. Պոկրովսկին ընտրուել է նորերս անգամ Լոնդոնի հընագիտական ընկերութեան:

ԲՈՂՈՔԱՎԱՐԵ ԵԿԵՂԵՑՈՒ
ԳՃՐՄԱՆՈՒ

Ներկայ թուականի յունիս 13-ից (1)-ից պըրուսական եկեղեցիներում գործածութեան մէջ է մտնում մի նոր վերակարգեալ ծիսարան, որ մի տարուց ի վեր վիճարանութիւնների և լրագրական քննադատութեան առարկայ էր, Թէ և բազմաթիւ ազատամիտ հոգևորականներ դէմ էին այս նոր ծիսարանի շատ կէտերին, այնուամենայնիւ կարծուում է, որ նա առանց մեծ դժուարութիւնների ընդհանուր ընդունելութիւն կը դանէ և այդպիսով կը վերանան մի շարք անհամաձայնութիւններ և անտեղի կարգեր զանազան տեղական եկեղեցիների միջից:

Օգոստոս 12—14 (յուլիս 31—օգոստոս) տեղի կունենան Բոննում չորրորդ արձակուրդի կուրսերը աւելատարանական հոգևորականների համար: որոնք անցեալներում ազատամիտ գաղափարներ արձարծելուն համար մեծ հակառակութիւնների և յարձակումների պատճառ են եղել: Գասախօսներն են այս անգամ Ապքսէ և Զի-

Ֆերտ ուսուցչապետները, լիցենցիա Մայր և Լից. Սիմոն:

Գերմանիայի Պօզէն քաղաքում եկող սեպտ. 23—26 կը գումարուի ներքին միսսիոնի քսանութե-րորդ համագումար ժողովը, որի ծրագիրը մէջ ենք բերում այս անգ՝ «Արարատ» ընթերցողներին մի գաղափար տալու համար:

Երկուշաբթի սեպտ. 23-ին ա) ներքին Միսսի-ոնի կեդրոնական յանձնախմբի անդամների խորհր-դակցութիւն. բ) Համագումար ժողովի բաց-ման առթիւ ժամասացութիւն. գ) Ողջունի ժողով:

Երեքշաբթի սեպտ. 24-ին Առաջին գլխաւոր համաժողով—ա) ներքին Միսսիոնի նախագահի ճա-ռք ժողովի բացման առթիւ: բ) «Քրիստոնեան հա-սարակական կեանքում. գ) կեդրոնական յանձնա-խմբի խորհրդակցութիւն արտաքին անդամների, գործակալների, ընկերութիւնների և հաստատու-թիւնների ներկայացուցիչների հետ: «Ներքին Միս-սիոն և հասարակական ձգտումներ: դ. «Սարկա-ւագուհիների (ողորմած քոյրերի) հաստատութիւն-ներ (Diakonissenhäuser) և սարկաւագների ընկերու-թիւններ» (Diakonenvereine): զ) առաջարկութիւններ ժողովի անդամների կողմից: է) Երեկոյեան ժա-մապաշտութիւն. ը) Ազատ ժողով—Աւետարանա-կան տնտեսների պաշտօնը (Hausvateramt) ընտա-նիքներում և համայնքներում: Ճ) Ազատ ճառագո-տութիւններ:

Չորեքշաբթի՝ 25 սեպտ. ա) «Քրիստոնէական ընկերական կեանքը համայնքներում»: բ) «Արեւ-ցողների հոգեշահութեան եղանակը»: գ) ինչպիսի անտեսական-հասարակական անպատեհութիւններ և ի՛նչպիսի կրօնական-բարոյական վտանգներ ունի բանուորների պանդխտութիւնը և ի՛նչպէս պէտք է դարմանել»: դ) ընդհանուր ճաշ: ե) Երեկոյեան ժամապաշտութիւն: զ) Երեկոյեան ազատ ժողովներ ճառագոտութիւններ «Հայրենիք օտարութեան մէջ» (Heim im der Fremde) բնարանի մասին 1) «Պօզնի բանուորները օտարութեան մէջ» 2) «Անհայրենիք կանաչ»:

Հինգշաբթի՝ 26 սեպտ. ա) փոխատու գանձա-րանների ընկերութիւնները և ներքին Միսսիոն: բ) պատանիների ընկերութիւնների (Junglingsvereine) կեանքը: գ) Երկրորդ գլխաւոր համաժողովը—1) ներքին Միսսիոնի նշանակութիւնը համայնքի կեանքի համար մանաւանդ «դի աս պր րայ» ում: 2) նա-խագահի վերջարանը: գ) ժամապաշտութիւն ժողովի վերջանալու առթիւ: ե) Համաժողովին մասնակցողների ազատ ժողով: Մենք չը յիշեցնիք ատենախօսների անունները, բայց սյարմը կարող ենք ասել, որ շատերը նոցանից յայտնի ուսուցչա-պետներ և պատրոններ են:

Գերմանական աւետարանական կանանց ընկե-րութիւններ կան համարեա երկրի ամեն կողմերում: գոցա թիւը 1444 է. նպատակն է օգնել նիւթապէս և բարոյապէս աղքատ դասակարգի իգական սեռին, մանաւանդ նոցա: որոնք ստիպուած են օտար քա-ղաքներ գնալ դորձ գանելու նպատակով: Ընկե-րութեան անդամուհիները թէ յայտարարութիւն-ներով և թէ անձամբ հետամուտ լինելով՝ աշխա-տում են իրենց օտարական քոյրերին շրջանի մէջ ձգել, իրենց այդ նպատակով հիմնուած հաստա-տութիւնների մէջ ապաստանարան տալ, որպէս զի փողոցային վտանգներից ազատ մնան նոքա: Այդ հաստատութիւնների մէջ բանուոր աղջիկները բոս-կարելոյն աժան գնով բնակարան և ճաշ են գտնում: հաստատութիւնները պատրոնների հսկողութեան տակ են, որոնք շաբաթուայ մէջ երեկոյեանները որոշ օրեր գալիս, փոքրիկ, դիւրամտեւելի բանախօսու-թիւններ են անում: միխիթարում և ընդ հաստատու-թիւնների մէջ կայ և հասարակաց դահլիճ, ուր ե-րեկոյեանները զուարճանալ, պարել, երգել կարող են իրենց համար, որպէս զի հարկաւորութիւն չը զգան զուարճութեան ուրիշ տեղեր գնալ, ուր փորձու-թիւններ աւելի հեշտութեամբ կարող են պատա-հել: Այդ երեկոյեան զուարճութեան ժամերին շատ անգամ մասնակցում են ընկերութեան անդա-մուհիները կամ սարկաւագուհիները, երբեմն էլ մինչև իսկ ազատ ժամերում ձեռագործ և այլն են սովորեցնում: Այդ ընկերութիւններից այժմ՝ 1465-ը մի միութիւն են կազմում: Բերլինի ընկե-րութիւնները, ուր աւելի բազմաթիւ է աղախիւնների և բանուոր կանանց դասակարգը, մեծ ծառայու-թիւններ են մատուցանում: Առանձին բարերար հետեանքներ է ունենում «կայարանների Միսսիո-նը»: ընկերութեան անդամներից շատերը գնում են կայարանները և նոր եկող աղջիկներին օգնութեան ձեռք են մեկնում:

Փարիզի փողոցներ մաքրողները մեծ մասով Հետսենցի (գերմանական դքսութիւն) Գերմանացի-ներ են: Այդ խեղճերը մինչև այժմ բոլորովին զրկուած էին ժամապաշտութիւնից և հոգեւոր միութարութիւնից՝ կիւրակի օրերն էլ զբաղուած լի-նելու պատճառով: Այժմ ինչպէս յայտնում է Deutsch-Evang. Kirchenzeitung, Փարիզի բողոքական կոնսիստորիան շաբաթուայ մէջ ժամապաշտութեան որոշ օր է նշանակել, յատկապէս այդ դասա-կարգի համար: Արատուն հաղորդում է, որ եկե-ղեցին բոլորովին լիքն է լինում աղօթողներով, որոնք՝ կարճ ժամանակով իրենց պարագմունքները ընդհատելով, մինչև իսկ մայրերը երեխաները գըր-

կերին կամ ուտելիքի կողովներով եկեղեցի են լցուում: Օտարոտի բայց ջերմեռանդ աղօթողների պատկեր է ներկայացնում եկեղեցին:

Մեր եկեղեցականութիւնն էլ մտածում է այն հարիւրաւոր պանդուխտների մասին: որոնք առանց պաշտպանութեան, առանց հոգևոր մխիթարութեան թափառում են Ա. Պոլսում: Բագուում: Թիֆլիսում: Բաթումում և ուրիշ քաղաքներում:

Ռերլենի քարոզչական ընկերութիւնը - Յունիսի 11 ին տանց իւր հիմնարկութեան տարեգարձը, Հաշուից երևում է, որ ընկերութիւնը Ափրիկեում 51 իջևաններ, 109 երկրորդական և 193 քարոզչական կեդրոններ ունի: իսկ 2ինաստանում 4 զլխաւոր և 20 երկրորդական իջևաններ 10 քարոզչական կեդրոններով: Ափրիկեում քարոզչութիւնների թիւը 70 է: իսկ 2ինաստանում 8: Ափրիկեում մերթաւանների թիւը անցեալ տարուայ ընթացքում 2 208 է: որոնցից հեծանոս 679 հասակաւոր և 144 երեխաներ: իսկ 2ինաստանում 56 հոգի: 1894 թ. վերջում սևամորթ համայնքների անդամների թիւը 27 119 էր:

Ա Ն Գ Ն Ի Ա

Կանանց ժուժկալ-ընկերութիւն.— Յունիսի 16-20 Լոնդոնում գումարուեցաւ World's women's christian Temperance Union-ի միջազգային ժողով, որի հետ միասին կատարուեցաւ նաև National Women's Temperance Association-ի տարեկան 19-րդ. ժողովը: Մեծ Բրիտանիայից 400 ներկայացուցիչներ էին եկել: բացի դորանից 13 եւրոպական և 19 Ամերիկայի: Ասիայի: Ափրիկայի և Աւստրալիայի ընկերութիւնների միութեանց ներնայացուցիչներ: Ժողովը իւր բարձրութեան գագաթնակետին հասաւ յուն. 20-ին Albert Hall- ում: ուր մօտ 10 000 հոգի էին հաւաքուել երկու սեռից: Այստեղ որոշուած վճիռները ժուժկալութեան խնդրին էին վերաբերում: բայց ժողովը ոչ պակաս նշանակութիւն ունէր նաև հասարական-քաղաքական կողմից: Ժողովի նախագահի գրութիւնը, որով որոշուած է ժուժկալութեան բոլոր ընկերութիւնները քննութեան ենթարկելու: պարունակում է իւր մէջ նաև մի շարք հասարակական-քաղաքական ծանրակշիւ կետեր: որոնց մեր կեանքին չը համապատասխանելուն պատճառով աւելորդ ենք համարում մէջ բերել: բայց չըմտանանք յիշել, որ առանձին շեշտուած էր աղքատների խնամատարութեան բարենորոգութիւնը: Ամէնքը համաձայն էին այն կէտի վերաբերութեամբ: որ բոլոր կանայք: ինչ երկրի և ինչ պետութեան էլ պատկանելու լինին ընդհանուր ուժով պէտք է մաքառեն կանանց հաւատարմութեան խնդրի համար և պարլամենտի

անդամ Walter Mr. Saren-ը որ կանանց ընտրական իրաւունքի ներկայացուցիչ է ներքին պարլամենտում: համառօտ ամենախօսութեամբ խրախուսեց կանանց այդ նպատակի համար աշխատելու:

Պաղեստին.— Պաղեստինի ուսումնասիրութեան անգլիական ընկերութիւնը իրաւունք է ստացել Երուսաղէմի շրջականերում երեք տարով պեղումներ կատարելու: նա բայց է արեւ Երուսաղէմի միջին պարիսպը, որ հարիւր օտ բարձրութիւն ունի և դէպի Սելսովամի բարձունքն է տարածուում: ընկերութիւնը գտել է նոյնպէս հարաւային դուռը, որ Յիսուսի ժամանակ Լստենների դուռ էր կոչուում: որովհետև այն ժամանակ դորա շրջակայքում զբարնուած գերեզմանների այրերի մէջ էին ապրում հրէական ձգնաւորները: Աւերջապէս դորտոր Բլիսը, որ պեղումների ղեկավարն է: ապրիլի վերջին գտել է այն ջրհորի բերանը, որ յիշուած է նէեմի 3: 15: Փոքր ինչ դէպի հիւսիս այդտեղից երևում է մի աշտարակ, որի արտաքին մասը թափուել է: կարծում են որ դա Սելսովամի աշտարակն է: որ Յիսուսի ժամանակ կործանուեցաւ և 18 հոգի տակույն արեց: Ա.ու.կ. 13: 4:

Ա Մ Ծ Ր Ի Կ Ա

Վաշինգտոնում մայիսի 28-ին մեծաւ միացեալ նահանգների պետական քարտուղար և միութեան գաւառոր Վալտեր Գրեդհամը, իւր ժողովրդի ամենազինւ անդամներից մէկը, Գաջ զինուորականը, միացեալ նահանգների բանակի զորագրւուիւր սրամիտ իրաւարանը և նշանաւոր պետական մարզը: մի և նոյն ժամանակ մի բարեպաշտ, հաւատարիմ քրիստոնեայ էր: նա հանգեաւ ի Տէր: Ս. Գրեքից իրեն սիրելի հատուածների ընթերցանութեան ունկն դնելիս: որ կարգումէր նրա ամուսինը:

Գեղեցիկ օրինակ.— Օկուշուրիի (ճափոնական հիւսիսային ամենափոքր կղզիներից մէկը), բնակիչները ապրում են բացառապէս ձկնորսութեամբ: Գարնան որսացած ձուկը այնքան առատ է: որ բաւական է ամբողջ տարուայ պարէնը հայթայթելու: այդ պատճառով էլ նոքա շատ ծոյլ կեանք էին վարում և անձնատուր էին եղել արբեցութեան: որ նոցա մէջ իշխող փախ էր դարձել արդէն: Մի տարուայ ընթացքում 260 հոգուց բաղկացած բնակչութիւնը տարեկան 12 000 մարկ էր ծախսում ոգելից խմիչքների համար: որ իւրաքանչիւր անձնաւորութեան ամսական 4 մարկ էր նստում: իսկ ամբողջ ընտանիքը ամսական հազու քսան մարկ էր ծախսում իւր ապրուստի համար: Բնական է: որ կղզու բնակիչները բոլոր-

վին քայքայուէին. շատերը սովի և ջրաի մասնուեցան. ճանապարհները խոպանացան, դպրոցը ցաւալի վիճակի մէջ ընկաւ. Տէրութեան պաշտօնեաների փորձը օգնելու թշուառութեան՝ ի դուր անցաւ. Ազգու բնակիչներէց մի քանիսը մի միտք յղացան. որ և առաջարկեցին ամբողջ Հասարակութեանը, այն է բոլորովին թողնել արբեցութիւնը. Ազգութեամբ նրանք մեծ արգելքի հանդիպեցան. բայց վերջապէս հասան իրենց նպատակին. Ազգու ամբողջ Հասարակութիւնը ուխտեց թողնել արբեցութիւնը և հետեւեալ որոշումը կազմեց. Ա) «Մենք Օգուշուրի կղզու բնակիչներս պարտաւորուում ենք հրաժարուել Հասարակութեամբ որեւից խմիչքների գործածութիւնից և որոշում ենք իսպառ դադարեցնել նորա գնեմն ու տոնելը. Բ) իւրաքանչիւր բնակիչ, որ այս ուխտը չի ստորագրել, այլ կըշարունակի որեւից խմիչքներ ծախել, գնել կամ խմել, կըմերժուի բոլորովին Հասարակութեան օգնութիւնից և պաշտպանութիւնից. Ազգու վերայ եղած օտարականներն ու պաշտօնեաները նոյնպէս ենթարկուեցան այս որոշման. Այս ուխտը 5 տարի ժամանակով էր կապուած և ամենայն խտութեամբ պահպանեցին նորա իրենց որոշումները. Հետեւեալը ակնհայտ էր. բնակիչների գրութիւնը միանգամայն կերպարանափոխուեցաւ. նորանոր ճանապարհներ բացուեցան, տները որոգուեցան, համայնական արկղը տասնապատիկ աճեց, երկու շտեմարաններ շինուեցան, ուր համայնքի իւրաքանչիւր ընտանիքի համար բաւականաչափ պաշար է պահուում. Հողի մի մասը, որ աւելի պակաս պտղատու էր, լաւ մշակուեցաւ և տարեկան 800 մարկ եկամուտ է բերում հասարակութեան. Գպրոցը ծաղկում է բնակչութիւնը բազմանում. 1889 թ. հասարակութիւնը նորոգեց իւր ուխտը չը նայելով մի բարձր պաշտօնեայի հակառակութեան. Մայր երկրի մի մեծ համայնք հետեւեց նոցա օրինակին.

Մէր էր, թէ մեր համայնքներն էլ նոյն կղանակով արմատախիչ անէին իրենց մէջ երեւան եկող պակասութիւնները.


Մի 2ինացի քրիստոնեայ նորերս մի գիրք է գրել Առնֆուկիոսի, Բուդգայի և Քրիստոսի վարդապետութիւնների վերաբերութեամբ. նա հետեւեալ պատկերներով ցոյց է տալիս դոցանից իւրաքանչիւրի արժէքը.

Մի մարդ ընկել էր մի խոր, մթին գրի մէջ, միանգամայն անկարող շարժուելու և գրի կեղտոտ յատակից ազատուելու. Առնֆուկիոսը պէտք է անցներ գրի մօտով. նա մօտեցաւ գրի եզերքին և ա-

սաց. «Խեղճ մարդ, ցաւում եմ քեզ վրայ. Ի՞նչու այնքան անմիտ էիր, որ փոսն ընկար, եթէ քեզ մի խորհուրդ տալ կարող եմ: այն է, որ եթէ դուրս գալու լինիս, այլ ևս մէջը չընկնիս. — Ախ, ես չեմ կարող դուրս գալ, հասաչեց մարդը.

Ապա եկաւ բուդգայական մի քահանայ և ասաց. «Խեղճ մարդ, ցաւում եմ, որ ես քեզ այդտեղ եմ տեսնում. Կարճում եմ, եթէ ճանապարհի մասը, եթէ մինչև իսկ կեսը դէպի վեր սողալ կարողանաս, այն ժամանակ քեզ կարող եմ բռնել և դուրս քաշել. Բայց գրի մէջ ընկած մարդը անկարող էր տեղից շարժուելու.

Բայց ահա գալիս է Փրկիչը, նա լսում է լացի ձայնը և բոլորովին յօտենում է գրի եզերքին. նա ցած է իջնում: բռնում է խեղճ մարդուն և դուրս հանում ասելով «գնա՛, այլ ևս մի մեղանչելի՛ր»:



ԳՐԱԿՆԵԿԱՆ—ՊԵՏՄԵԿԱՆ

ՍԵՍԵՆԵԱՆ ՏԵՐՈՒԹԵԱՆ ՊԵՏՄՈՒԹԻՒՆ.

Թ. Ն Ը Օ Լ Գ Է Զ Ը Ի.

Այն երկրներին որոնց իշխանները երբեմն իրապէս և երբեմն միայն անուանական կերպով պարթեական «արքայից արքային» հպատակ էին, պատկանում էր նոյնպէս իսկական Պարսկաստանը կամ

1. Հայոց հարեան ազգերից ոչ մէկի պատմութիւնը այնքան սերտ շաղկապուած չէ մեր պատմութեան հետ, որքան Պարսիցը, իսկ Պարսից պատմութիւնից մեծագոյն աղբյուրութիւնն ունի հայկականի հետ Սասանեան շրջանի պատմութիւնը, որի ուսումնասիրութիւնը անհրաժեշտ է հայկական պատմութեան հետազոտութեան համար: Եւրոպական արեւելագէտներից առաջատոր Ասիայի ազգերի քաղաքակրթութեան և լեզուների ուսումնասիրութեան մէջ առաջին տեղը ունի այսօր Ստրասբուրգի համալսարանի ուսուցչապետ Թ. ՆՇՕՂԷՔԷՆ, որ ևս հրատարակեց հանրագիտական քառաբանի մէջ գրել է Պարսից Աքեմենեան և Սասանեան շրջանների պատմութիւնը: «Encyclopaedia Britannica»-ի յօդուածների գերմաներէն թնագիրը ՆՇՕՂԷՔԷՆ հրատարակեց 1887-ին «Aufsätze zur Persischen Geschichte» որից թարգմանում ենք Սասանեան շրջանի պատմութիւնը: Ժամանակ է, որ հայոց պատմութեան ուսումնասիրութիւնը համապատասխանէ արդի գիտութեան պահանջներին, իսկ դրա համար պէտք է գտնէ մի մօտաւոր ծանօթութիւն Հայաստանի սահմանակից ազգերի պատմութեան: Մասամբ միայն այս պէտքը լրացնելու համար է ահա, որ ձեռնարկել ենք այս թարգմանութեանը: Ժամօթ. Թարգմանչի.